



ԵԱՀԿ Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ



Հայաստանի
ՔՀԿ-ների
Հակակոռուպցիոն
կոալիցիա



Ծրագիրը
ֆինանսավորվում է
Եվրոպական միության
կողմից

Ծրագիրը համաֆինանսավորվում
է
ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի
կողմից

Իրականացնող՝
Իրավաբանների հայկական
ասոցիացիա

Իրականացնող՝
Հայաստանի ՔՀԿ-
ների
հակակոռուպցիոն
կոալիցիա

Գործընկեր՝
Ինֆորմացիայի
ազատության
կենտրոն

«Կրթության ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը»
ԱՄՓՈՓՈՒՄ

Իրավաբանների հայկական ասոցիացիա,
Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա

Երևան,
2016թ.

**«Կրթության ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը»
հակակոռուպցիոն միջոցառում (ք. Կապան)**

2016 թվականի հուլիսի 15-ին Կապանում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հետ համատեղ, Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում կազմակերպեց հակակոռուպցիոն միջոցառում՝ «Կրթության ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը» թեմայով:

Միջոցառման նպատակը կրթության համակարգում առկա կոռուպցիոն ռիսկերի վերհանումը և համապատասխան լուծումների նախանշումն էր:

Միջոցառմանը մասնակցում էին պետական մարմինների, բիզնես կազմակերպությունների և միավորումների, ՁԼՄ-ների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի փորձագետները:

Միջոցառմանը ողջույնի խոսքով հանդես եկավ Սյունիքի փոխմարզպետ Վաչե Գրիգորյանը: Վերջինիս կարծիքով՝ կոռուպցիայի դեմ կարող է պայքարել այն հասարակությունը, որը զարգացած քաղաքացիական հասարակություն ունի. «Զարգացած քաղաքացիական հասարակության մեջ տեղ չի կարող գտնել կոռուպցիան: Հատկապես դա սկսվում է այսօրվա մեր քննարկվելիք թեմայից՝ կրթությունից, որովհետև կրթությունն է հասարակության զարգացնող նախապայմանը: Նաև խոցելի է կրթությունը: Կարևորելով այդ դերը՝ պետք է ավելի մոտիկից ծանոթանալ այդ խնդրի հետ և ճանաչելով այն՝ լուծում տալ դրան»:

Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող Կարեն Զադոյանն իր ողջույնի խոսքում անդրադարձավ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի պայքարին՝ նշելով, որ ներկայումս մշակվում է հակակոռուպցիոն ունիվերսալ անկախ մարմնի մոդելը, որի կարևորագույն բաղադրիչներից է կրթական գործառույթը:

ՀՀ Կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչ **Մարինե Աղաջանյանը** խոսեց տարատեսակ ուսումնական հաստատություններում անցկացվող դասընթացների մասին՝ ուղղված կոռուպցիային և դրա կանխարգելմանը:

Ողջույնի խոսքերին հաջորդեցին զեկույցներ կրթության ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերի, դրանց հաղթահարման մարտահրավերների և այդ ոլորտում ՔՀԿ-ների հետ համագործակցության հնարավորությունների վերաբերյալ, նախանշվեցին այս ոլորտում հետագա համագործակցության և աշխատանքների ուղղությունները:

Հակակոռուպցիոն միջոցառմանը զեկույցներով հանդես եկան՝ «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի տեղական փորձագետ՝ **Մարատ Ատովյանը**, ով ներկայացրեց զեկույց «Կրթության ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը և հաղթահարման մարտահրավերները» թեմայով, Հայաստանի ԱՄՆ շրջանավարտների ասոցիացիայի գործադիր տնօրեն **Ալեքսանդր Շագաֆյանը**, ով ներկայացրեց «Հակակոռուպցիոն կրթության դերը քաղաքացիական կրթության ոլորտում» և խոսելով հանրակրթության ոլորտից, ասաց, որ հակակոռուպցիոն գործողություններ հարկավոր է իրականացնել երեք կարևորագույն

ինստիտուտներում՝ դպրոցի կառավարման, մանկավարժական և աշակերտական խորհրդներում:

Զեկույցով հանդես եկավ նաև ՀՀ Կրթության և գիտության նախարարության աշխատակազմի զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության գլխավոր մասնագետ, վարչության պետի պաշտոնակատար **Մարինե Աղաջանյանը**, ով ներկայացրեց «Կրթության ոլորտում իրականացված հակակոռուպցիոն բարեփոխումները»:

Զեկույցներով հանդես եկան նաև՝ «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի տեղական փորձագետ՝ **Մարիամ Զադոյանը**, ով ներկայացրեց՝ կրթության ոլորտում իրականացված հակակոռուպցիոն բարեփոխումները, և «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի իրավաբան, ծրագրի բարեփոխումների հարցերով մասնագետ՝ **Մյուզաննա Սողոմոնյանը**, ով ներկայացրեց՝ բարձրագույն կրթական հաստատություններում հակակոռուպցիոն աուդիտի ներդրումը, որպես կոռուպցիայի կանխարգելման հայեցակարգ:

Զեկույցներին հաջորդեցին ոլորտային քննարկումներն և հակակոռուպցիոն միջոցառման ամփոփումը:

Խնդիրներ և առաջարկներ

1. Առկա է հանրակրթական և մասնագիտական կրթական հաստատությունների թափանցիկության, հաշվետվողականության և հանրային վերահսկողության ապահովման խնդիր:

Առաջարկ 1. ՀՀ կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայք էջում՝ edu.am-ում հրապարակել

- Հանրակրթական և մասնագիտական կրթական հաստատությունների կայքերի ցանկը,
- Վերոնշյալ հաստատությունների հաստիքացուցակները՝ համաձայն ԿԳՆ-ի կողմից հաստված օրինակելի ձևերի, օրինակ՝ ՀՀ ԿԳ նախարարի 2007 թվականի հունվարի 26-ի N29-Ն հրամանով սահմանված ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակներ, ինչպես նաև աշխատավարձերի տարիֆիկացիոն ցուցակը: Որպես հաջողված նմուշ կարելի է բերել, օրինակ, ՀՀ Արմավիրի մարզի «Գայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը:
- Վերոնշյալ հաստատությունների ընթացիկ տարվա բյուջեն/տարեկան նախահաշիվը և նախորդ տարվա հաշվետվությունը:
- Վերոնշյալ հաստատություններում, աշխատանքային գործունեության ներքին գնահատում, որը ներառում է
 - Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար,
 - Ըստ դասարանների՝ սովորողների թիվը ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար,
 - Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար,
 - Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար,

- Տվյալներ ուսումնական հաստատության ղեկավար և վարչական կազմի վերաբերյալ,
- Տվյալներ ուսումնական հաստատության կառավարման խորհրդի կազմի վերաբերյալ և այլն:¹

Առաջարկ 2. Հանրակրթական և մասնագիտական կրթական հաստատություններում ներդնել հակակոռուպցիոն քաղաքականություն, որը կսահմանի՝

- վարքագծի կանոնակարգի մշակում և ներդնում,
- շահերի բախման ուղեցույցի, ներառյալ՝ շահերի բախման հայտարարագրի մշակում և ներդնում,
- ներքին մոնիթորինգի քաղաքականության մշակում և ներդնում,
- գնումների իրականացման քաղականության (տենդեր, բյուջե) մշակում և ներդնում,
- անանուն պարտադիր գնահատման թերթիկների համակարգի մշակում և ներդնում, որոնք հնարավորություն կընձեռնեն ուսուցանողներին ազատ և անկաշկանդ գնահատել իրենց դասավանդած մասնագետներին, այնուհետև վերլուծել տվյալ գնահատման թերթիկները և ձեռնարկել համապատասխան քայլեր կրթության որակը բարձրացնելու, բարեխիղճ և բանիմաց մասնագետներով ապահովելու համար: Այս մեխանիզմը արդեն իսկ գործում է որոշ բարձրագույն ուսումնական հաստատություններում, սակայն անհրաժեշտ է այն համընդհանուր և պարտադիր դարձնել:

Առաջարկ 3. Սահմանել երաշխիքներ հանրակրթական և մասնագիտական կրթական հաստատությունների սուբյեկտների համար՝ բարեխղճության սկզբունքների խախտման և կոռուպցիոն բնույթի հաղորդումներ ներկայացնելու դեպքում, մասնավորապես՝

- վերոնշյալ հաստատություններում նշանակել պատասխանատու անձանց կամ ստեղծել համապատասխան ստորաբաժանումներ, ովքեր կհամակարգեն ստացված տեղեկությունները և բավարար հիմքերի առկայության դեպքում դրանք կներկայացնեն կոնկրետ հարցի/խնդրի վերաբերյալ ժամանակավոր հանձնաժողովի քննարկմանը: Սույն հարցի կարգավորման շրջանակներում անհրաժեշտ է վերոնշյալ հաստատությունների կողմից,
- ընդունել ներքին իրավական ակտ վերոնշյալ հաստատության մասին վերը նշված բնույթի տեղեկատվություն հայտնող անձանց պաշտպանության վերաբերյալ:

Առաջարկ 4. Ներդնել հակակոռուպցիոն պարտադիր առույիտ: Այն գործում է Լեհաստանում, Չեխիայում և այլն: Ներկայումս սույն հարցի վերաբերյալ իրականացվում է ուսումնասիրություն: Արդյունքները կներկայացվեն լրացուցիչ:

¹ Հարկ է նշել, որ պիլոտային շրջանում սա առաջարկում ենք կիրառել պետական և համայնքային հաստատությունների նկատմամբ:

Առաջարկ 5. ՔՀԿ-ներին պատվիրակման միջոցով կամ համատեղ հանրակրթական և մասնագիտական կրթական հաստատություններում իրականացնել հասարակական մշտադիտարկումներ, օրինակ՝ հարցազրույցներ, ֆոկուս խմբեր վերոնշյալ հաստատությունների սուբյեկտներից հետ, որի միջոցով վեր կհանվեն առկա խնդիրներն ու կոռուպցիոն ռիսկերը: Անհրաժեշտության դեպքում նշված միջոցառումները կարող են իրականացվել Chatham House ձևաչափով՝ ապահովելով մասնակիցները անանունությունը: Վերոնշյալի արդյունքում ներկայացնել համապատասխան համակարգային և ընթացակարգային առաջարկություններ՝ ուղղված դրանց նվազեցմանը և վերացմանը:

6. Կրթական համակարգը չի պարունակում **հակակոռուպցիոն կրթության** տարրեր, որի հետևանքով էլ հասարակության մոտ փոքր տարիքից չի ձևավորվում հակակոռուպցիոն ճիշտ ընկալում:

Առաջարկ 6.

- ՀՀ ԿԳՆ-ի կողմից կազմակերպել տարեկան մեկ անգամ հակակոռուպցիոն և բարեխղճության բնույթի շարադրությունների համապետական մրցույթ հանրակրթական դպրոցների աշակերտների համար: Նախատեսել, որ յուրաքանչյուրից մարզում կընտրվեն լավագույն շարադրությունների մինչև 5 հեղինակներ, որոնք անվճար հիմունքներով կմասնակցեն ՀՀ ԿԳՆ-ի կողմից կազմակերպված հակակոռուպցիոն ճամբարին/ամառային դպրոց:

Առաջարկ 7.

- ՀՀ ԿԳՆ-ի կողմից կազմակերպել տարեկան մեկ անգամ հակակոռուպցիոն և բարեխղճության բնույթի վերլուծությունների համապետական մրցույթ բուհերի և մասնագիտական կրթական հաստատությունների ուսանողների համար: Նախատեսել, որ յուրաքանչյուրից մարզում կընտրվեն լավագույն վերլուծությունների մինչև 5 հեղինակներ, որոնք անվճար հիմունքներով կմասնակցեն ՀՀ ԿԳՆ-ի կողմից կազմակերպված հակակոռուպցիոն ճամբարին/ամառային դպրոց:

Առաջարկ 8.

- Վերանայել հանրակրթական հաստատություններում հակակոռուպցիոն ուսուցման ծրագիրը, նախատեսել աշակերտների տարիքին համապատասխան հակակոռուպցիոն կրթական դասաժամեր, հրավիրել ոլորտային փորձագետների՝ հակակոռուպցիոն պայքարի հաջողված օրինակներ և հակակոռուպցիոն պայքարի առաջնորդների կենսագրություններ ներկայացնելու նպատակով, քանի որ ներկայումս հանրակրթական դպրոցներում «Հասարակագիտություն» առարկայի շրջանակներում երիտասարդ սերնդին բավարար գիտելիքներ չեն փոխանցվում հակակոռուպցիոն պայքարի մասին:

Առաջարկ 9.

- Բուհերում և մասնագիտական կրթության հաստատություններում ներդնել հակակոռուպցիոն և բարեխղճության վերաբերյալ դասընթացներ, որի ընթացքում կներկայացվեն կոռուպցիայի դրսևորումները, առաջացման պատճառները, կոռուպցիայի դեմ պայքարի մեխանիզմները, կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային ձևաչափերը և փաստաթղթերը, հակակոռուպցիոն ոլորտում ՀՀ միջազգային պարտավորությունները և համանման թեմաներ: Օրինակ, համանման դասընթաց առկա է Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի մագիստրոսական կրթական ծրագրում:

Առաջարկ 10.

- Նախատեսել աշակերտների տարիքին համապատասխան հակակոռուպցիոն կրթական դասաժամեր, հրավիրել ոլորտային փորձագետների՝ հակակոռուպցիոն պայքարի հաջողված օրինակներ և հակակոռուպցիոն պայքարի առաջնորդների կենսագրություններ ներկայացնելու նպատակով: Հայաստանի համար ուսուցանելի կարող է լինել Լիտվայի փորձը, որտեղ դպրոցների համար հետաքրքիր ուսումնական նյութեր են մշակվել, ինչպես նաև Հոնգ Կոնգի և Սինգապուրի որդեգրած համակողմանի մոտեցումները:

Առաջարկ 11.

- Կազմակերպել նախադպրոցական հաստատություններում հակառուպցիոն բնույթի հանդեսներ և խաղեր:

Առաջարկ 12.

- Մանկավարժներին վերապատրաստել բարեխղճության և հակակոռուպցիոն թեմաներով, տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ և պրակտիկ հմտություններ հաղորդել:

Առաջարկ 13.

- Ծրագրավորել տարբեր համակարգչային խաղեր, որոնք կվերաբերեն մարդու իրավունքներին և կառուպցիայի դեմ պայքարին: Ընդ որում, խաղերը կարող են լինել ինչպես տեղեկատվական բնույթի, այնպես էլ իրավիճակային՝ հիմնված հակակոռուպցիոն սցենարների վրա:

Ընդ որում, առաջարկում ենք, որ սույն գործողությունները ԿԳՆ-ն իրականացնի ՔՀԿ-ների հետ համագործակցությամբ: Հարկ է նշել, որ Transparency International-ն իր զեկույցներում ևս նշել է, որ վերոնշյալ համագործակցությունը հաջողության հասնելու գրավականն է:²

² Best practices in engaging youth in the fight against corruption, U4 expert answer, 2013

14. ՀՀ կրթական օրենսդրությունը կազմված է 12 առանձին օրենքներից, որոնք ընդունվել են տարբեր ժամանակահատվածներում և դրանց ընդունումից մինչև այժմ այդ օրենքներում անընդհատ փոփոխություններ և լրացումներ են կատարվել, որոնք որոշ դեպքերում հակասում են միմյանց կամ անհարկի կրկնվում են: Արդյունքում, մի կողմից նկատելիորեն բարդացել է կրթական հարաբերություններ կարգավորող օրենսդրությունից օգտվելը, մյուս կողմից կրթական հարաբերություններ կարգավորող իրավական ակտերի այս տարանջատվածությունն ու բազմազանությունը ստեղծել են մի այնպիսի իրավիճակ, երբ միևնույն նշանակություն ունեցող հասկացությունները տարբեր իրավական ակտերում կիրառվում են տարբեր եզրույթներով, երբ միատեսակ կրթական հարաբերությունները կարգավորվում են տարբեր սկզբունքներով ու կանոններով:

Առաջարկ 14. Ընդունել Հայաստանի Հանրապետության **կրթական օրենսգիրք**: ՀՀ կրթական օրենսգրքի ընդունմամբ հնարավոր կլինի նկատելիորեն կենտրոնացնել և միօրինակ դարձնել կրթական հարաբերություններ կարգավորող բազմաթիվ իրավական ակտերը, ինչի արդյունքում կրթական օրենսդրությունը կդառնա առավել համակարգված, իսկ դրանից օգտվելը՝ դյուրին:

15. Կրթության ոլորտում առաջնային խնդիր է համարվում ոլորտի մասնագետների՝ ուսուցիչների, դասախոսների ցածր աշխատավարձերը, որոնք կարող են պատճառ հանդիսանալ կոռուպցիոն ռիսկերի աճման համար: Աշխատավարձերի խնդրին են բախվում հատկապես այն ոլորտային մասնագետները, որոնք աշխատում են համայնքների ենթակայության տակ գտնվող դպրոցներում, օրինակ՝ երաժշտական դպրոցներում, արհեստագործական քոլեջներում և այլն:

Առաջարկ 15. Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել ոլորտի մասնագետներին արժանապատիվ վարձատրություն ապահովելու ուղղությամբ:

16. Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների **կառավարման խորհրդի անդամների** ներկայացվածության համամասնությունը օրենքով նշված չէ, որի պատճառով կառավարությունը խիստ ներգրավվում է բուհի գործունեության մեջ, ինչն իր հետ բերում է կոռուպցիոն ռիսկեր:

Առաջարկ 16. Անհրաժեշտ է խորհրդի անդամների կազմում վերանայել պետական մարմինների մասնակցության նպատակահարմարությունը և առնվազն խիստ սահմանափակ տեղեր տրամադրել:

17. Առկա են կոռուպցիոն ռիսկեր **հետքուհական համակարգում**, մասնավորապես ասպիրանտուրա ընդունվելու, գիտական ղեկավար ունենալու և այլ գործընթացներում: Հիմնական խնդիրներից մեկը նեպոտիզմն է: Ընդունվելիս գիտական ռեֆերատի դրական կամ բացասական գրախոսական տալու հետ կապված չափանիշներ սահմանված չեն:

Առաջարկ 17.

- Օրենսդրությունը փոփոխել այնպես, որ գիտական ղեկավար դառնալու արհեստական սահմանափակումները վերանան:

Առաջարկ 18.

- Օրենսդրորեն սահմանել չափանիշներ գիտական ռեֆերատի դրական կամ բացասական գրախոսական տալու հետ կապված

Առաջարկ 19.

- Շահերի բախման քաղաքականություններ ստեղծել, օրինակ այն իրավիճակների համար, երբ գիտական խորհրդի անդամի ընտանիքի անդամն է պաշտպանում: